# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք.Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdi.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

04 ՄԱՐՏԻ 2022 թվականի N 87-Ա

## ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի ապրիլի 22-ի «ՔՊ պլանների մշակման կարգը սահմանելու մասին» թիվ 633-Ն որոշման 1-ին գլխի 2-րդ կետը ***որոշում եմ՝***

1. Հաստատել՝ ՀՀ Լոռու մարզի Ալավերդի համայնքի քաղաքացիական պաշտպանության պլանը, համաձայն հավելվածի.
   1) հիմնական ցուցանիշները՝ համաձայն N 1 հավելվածի.
   2) պլանը՝ Ալավերդի համայնքի տարածքում հնարավոր իրավիճակի և բացատրագիր, համաձայն N 2 հավելվածի.
   3) տվյալները՝ Ալավերդի համայնքի տարածքի քիմիապես վտանգավոր օբյեկտների վերաբերյալ, համաձայն N 3 հավելվածի.
   4) կառավարման, կապի և ազդարարման սխեման՝ համաձայն N 4 հավելվածի.
   5) ցանկը՝ «Բարձր» և «Լրիվ» պատրաստականության աշխատակարգի միջոցառումների, համաձայն N 5 հավելվածի.
   6) պլանը՝ Ալավերդի համայնքի քաղաքացիական պաշտպանության հետախուզության և բացատրագիր, համաձայն N 6 հավելվածի.
   7) հաշվարկը՝ Ալավերդի համայնքի բնակչության անհատական պաշտպանության միջոցներով ապահովման, համաձայն N 7 հավելվածի.
   8) հաշվարկը՝ Ալավերդի համայնքի բնակչության պատսպարման, համաձայն N 8 հավելվածի.
   9) հաշվարկը՝ Ալավերդի համայնքի բնակչության պատսպարման, համաձայն N 9 հավելվածի.
   10) հաշվարկը՝ Ալավերդի համայնքի քաղաքացիական պաշտպանության ուժերի և միջոցների, համաձայն N 10 հավելվածի.
   11) հաշվարկը՝ կապի միջոցների, համաձայն N 11 հավելվածի.

12) հաշվարկը՝ ինժեներական տեխնիկայի ապահովման, համաձայն N 12 հավելվածի:

2. Սույն հրամանի 1-ին կետով հավելվածները հաստատվում են երեք տարի ժամկետով:
3. Հրամանի կատարման հսկողությունը վերապահում եմ ինձ:
4. Հրամանը հայտարարել ըստ առնչության:
5. Ուժը կորցրած ժանաչել Ալավերդի համայնքի ղեկավարի 25.02.2022թ. «Ալավերդի համայնքի քաղաքացիական պաշտպանության պլան-ժամանակացույցը, հիմնական ցուցանիշները, տարածքի հատակագիծը և բացատրագիրը, ղեկավար կազմի կառավարման, կապի և ազդարարման սխեման, հետախուզության պլանը, բնակչության անհատական պաշտպանության միջոցներով ապահովման, բնակչության պատսպարման, տարահանման հաշվարկը, ուժերի և կապի, ինժեներական ապահովման տեխնիկայի միջոցների հաշվարկը հաստատելու մասին» N 75-Ա որոշումը:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՍԱՍՈՒՆ ԽԵՉՈՒՄՅԱՆ**

2022թ. մարտի 04
ք. Ալավերդի